Նայք աղջկունք ոտքով, և համեստութեան քօղը գլուխնին, տանուտէրք և երիտասարդք երկայնախոնջ կօշիկնին վեր քաշած, գօտիներն ամուր կապած, գեղացիք տրեխնին զսպած, տրտում տխուր առաջ կ'երթան օտար և անծանօթ աշխարհք։ Կարծես Իսրայելի Նոր բանակ մի է, որ եգիպտական բռնութենէ փախստական կ'երթայ։ Սոցա առաջնորդք թէպէտ հանգոյն Մովսիսի բազմապատիկ վտանգներու ենթարկուած 'ի Թաթարաց, այլ չունին ոչ Մովսիսի քաջութիւնը և ոչ Նորա լուսապայծառ դէմքը, որպէս զի նոցանէ պատկառին ժողովուրդք։ Արդեօք այսոր պատճառը հազարաւոր րուբլիներն են, որովք վարձատրած է զնոսա ռուս տէրութիւնն [1]. այլ ես չեմ կարող հաւանիլ որ Տէր Պետրոս և Յակոբ վարդապետները թողլով հետիոտս իրենց հօտը, իրենց կառքերու մէջ բազմած առաջ գնացած լինին։ Որպէս և իցէ՝ Հայք իրենց այս միջոցիս առաջնորդաց վրայ՝ ոչ այն ատեն և ոչ ապա ժամանակ անցնելէն, չեն ունեցեր այն գոհացուցիչ համակրութիւնը, որում, ըստ իմ կարծեաց, արդար կերպով մտածելով՝ մեծապէս արժանաւորք են. վասն զի բազմապատիկ վտանգաց ենթարկուած են այդ սեւագլուխ առաջնորդք, մինչև որ Թաթարաց վերջին կատաղութենէ ազատեն իրենց հօտը։ — Զրուցենք քանի մի խօսք եւս այդ առաջնորդաց մասին։

1 Առաջնորդք գաղթականաց առացել են 'ի տէրութենէ. Իգնատիոս Մետրապօլիտ 6550 ր. Պետրոս վարդապետ 2820 ր. Յակոբ կանոնիկոս 1250 ր. դարձեալ նոցա կառքերու և ձիերու համար տուած է տէրութիւնն 2779 րուբլի։ Խառթախայ քրիստ. 'ի Ղրիմ։